«ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստի

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 58/03

ք. Երևան,Արշակունյաց 5.417 սենյակ 03.06.2019թ. ժամը 15:00

Համաձայն «ՄԳԿԿ» ԻԿԿ-ում 24.03.2020թ-ին ստացված, պարտապան «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Մերուժանի Սողոմոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու, վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում արծածված հանգամանքների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար՝ ս/թ-ի Հունիսի 03-ին,ժամը 15.00՝ք.Երևան,Արշակունյաց 5 հասցեում, հրավիրվել էր «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստ: «ՍԳԿԿ» ԻԿԿ Կարգապահական հանձնաժողովի նիստին.

ԾԱՆՈՒՑՎԱԾ ԷԻՆ՝
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմինե Մովսիսյանը
Դիմումատու՝«Խասուրո Գրուպ»ՓԲ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը :

ՄԱՄՆԱԿՑԵՑԻՆ՝
Հանձնաժողովի Նախագահ՝ Տիգրան Հարությունյանը
Հանձնաժողովի անդամ՝Արմինե Մովսիսյանը
Հանձանժողովի անդամ՝ Ռուբեն Խալաթյանը
Հանձանժողովի անդամ՝ Արմենակ Աղամյանը
Հանձնաժողովի անդամ՝ Հարություն Գևորգյանը
Դիմումատու՝«Խասուրո Գրուպ» ՓԲ ընկերության սնանկության գործով նախկին կառավարիչ՝ Հովհաննես Սողոմոնյանը :

ՕՐԱԿԱՐԿՈՒՄ՝
1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 24.03.2020թ-ին ստացված, պարտապան «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Մերուժանի Սողոմոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու,վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթ հարուցելու և դիմումում նշված փաստական հանգամանքների քննության և սնանկության գործով կառավարչի վարքագծի վերաբերյալ, կարգապահական վարույթ հարուցելու հարցը:

ԼՍԵՑԻՆ-Կարգապահական Հանձնաժողովի՝ նախագահ Տիգրան Հարությունյանը՝ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.6 հոդվածի կարգով դիմումը ներկայացնելու համար ձայնի իրավունք տվեց դիմումատու՝«Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Մերուժանի Սողոմոնյանին, ով մասնավորապես նշեց,որ 28.03.2019թ-ի բողոք դիմումի շրջանակներում 30.08.2019թ-ին կայացած Կարգապահական հանձնաժողովի նիստում, քննարկվել է «Խասուրո Գրուպ»ՓԲԸ-ի սնանկության գործով ներկա և նախկին կառավարիչների հանդեպ կարգապահական վարույթի հարուցման հարցը և ըստ եզրակացության մերժվել է վարույթի հարուցումը վաղեմության հետ կապված:Եզրակացության հիմքով կայացած Դիտորդ խորհրդի նիստում քննարկվել է նույն հարցը և որոշվել է կառավարիչներին տալ նկատողություն:

Վերոնշյալի վերաբերյալ սնանկության գործով նախկին կառավարիչը ներկայացրեց փաստեր և փաստաթղթեր ի հիմնավորումն այն բանի,որ սնանկության վարույթի իր վարման ընթացքում իր կողմից իր լիազորությունները կատարվել են բարեխղճորեն,որոնք բացառապես բխել են օրենքների պահանջներից: Նախկին կառավարիչը նշեց նաև որ քննարկված բողոքը հիմնականում սնանկության գործով կառավարիչ Հովհաննես Թոռչյանի կողմից սնանկության վարույթի գործառույթների չկատարվում կամ շատ դանդաղ կատարման վերաբերյալ էր և չկար ոչ մի փաստ Հովհաննես Սողոմոնյանի գործողությունների կամ անգործության մասին:

Կառավարիչը խնդրում է մեկ անգամ ևս ուսումնասիրել իր կողմից բերված ապացույցները և հաշվի առնելով ներկայացված հանգամանքները վերացնել իր հանդեպ կիրառված հրապարակային նկատողություն հայտարարելու անձանագրությամբ տրված որոշումը:

Հանձնաժողովի նախագահ Տ.Հարությունյանը ձայնի իրավունք վերցրեց և պարզաբանման կարգով հայտարարեց,որ ներկայացված բոլոր փաստարկները և ապացույցները վերաբերվում են սնանկության վարույթի նույն ժամանակաշրջանին այսինք ունեն 2-2.5 տարվա վաղեմություն և կարող են հերքել կամ ապացուցել այդ ժամանակ կատարված կարգապահական խախտումը,իսկ հանձնաժողովը արդեն այդ մասին իր 30.08.2019թ-ի թիվ 45/02-05 եզրակացությամբ տվել է կարծիք,որը ըստ էության ներկայացրած փաստերը չեն կարողփոխել:

Հանձնաժողովի անդամները համաձայնեցին հանձնաժողովի նախագահի կարծիքին առ այն,.որ «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործերով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման Կարգի» 4.12 հոդվածի.

*-Կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթը կարող է հարուցվել կարգապահական պատասխանատվության հիմք հայտնաբերվելուց հետո՝վեցամսյա ժամկետում,բայց ոչ ուշ,քան հիմքը ծագելուց մեկ տարի հետո:Սույն մասում նշված ժամկետներն անցնելուց հետո կարգապահական վարույթը չի կարող հարուցվել,իսկ հարուցված վարույթը ենթակա է կարճման:*

Վերոգրյալի հիմքով նախկին կարճման ենթակա կարգապահական վարույթով այժ նոր երևան եկած հանգամանքների վերաբերյալ պետք է լինի նույն կարծիքը,քանի որ դրանք նույնպես վերաբերվում են նույն ժամանակաշրջանին և անկախ այն փաստից կարգապահական խախտումը առկա թե ոչ,դրա վերաբերյալ կարգապահական վարույթ պետք է հարուցվի սահմանված ժամկետներում և քանի որ ներկայացված փաստական հանգամանքները նույնպես վերաբերվում են շուրջ 2-2.5 տարի վաղեմության հնարավոր կարգապահական խախտումներին ուստի վերընշված հիմքով Հանձնաժողովի նախագահն առաջարկեց մերժել Կարգապահական վարույթի հարուցումը:

Հանձնաժողովի մյուս անդամները համակարծիք եղան առաջարկին և քվերկեցին՝

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ՝

Կողմ - 4

Դեմ – 0

Ձեռնպահ – 0

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ՝

1. «ՍԳԿԿ» ԻԿԿ-ում 24.03.2020թ-ին ստացված, պարտապան «Խասուրո Գրուպ» ՓԲԸ-ի սնանկության գործով նախկին կառավարիչ՝Հովհաննես Մերուժանի Սողոմոնյանի դիմումի հետագա ընթացքը ապահովելու,վերահսկողության գործառույթի պատշաճ իրականացման նպատակով, կառավարչի վարքագծի վերաբերյալ կարգապահական վարույթի հարուցումը «Կարգապահական հանձնաժողովի գործունեության և սնանկության գործով կառավարչի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 4.12. հոդվածի հիմքով մերժել,կարգապահական վարույթի հարուցման ժամկետների անցկացման հիմքով:

Ներկայացված դիմումը,բացատրությունները և կից փաստաթղթերը կցել գործին:

2.Սույն Եզրակացությունը սահմանված ժամկետում ներկայացնել Դիտորդ Խորհրդին՝ հետագա որոշում կայացնելու նկատառումով:

Հանձնաժողովի Նախագահ՝ Տ.Հարությունյան

Հանձնաժողովի անդամ՝ Ա.Ադամյան

Հանձնաժողովի անդամ՝ Ռ.Խալաթյան

Հանձնաժողովի անդամ՝Հ.Գևորգյան

Հանձնաժողովի անդամ՝Ա.Մովսիսյան